

ՆԻԻԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԶ ՄԱՆԳԱՍԱՐԵՆՑ

(1415 - 1502)

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, ք. 4-6, էջ 98)

Յովհաննէս Մանգասարենցի կեանքը իրապէս բազմաշարժար է և տառապալից կեանք մը եղած է: Իր յիշատակարաններուն մէջ, կը ժամանակագրէ պատահած քաղաքական և պատերազմական դէպքերը, կը խօսի աւերածութեանց, մահաւորածամներու և ուրիշ ազգանքներու մասին: Կարեւոր են իր տեղեկութիւնները, որոնք մեծ մասամբ ականատեսի վկայութիւններ են: Կը յիշէ 1437ին Շահառուի, Սքանդարի և Ջահանշահի մարտնչումները՝ Վանի շուրջ: Եւ կ'աւելցնէ. «Ի պարտնացն Ջահանշին մին անիծեալ Փիրալի անուն ի բերդն Ամիու. և հանապաղ ելանէր ի բերդէն. և զայր ի վերայ երկրիս Արճշոյ և Արծկոյ, զոմանս չարչարէր, զոմանս սպանանէր և զոմանց զողայսն գերի առնէր, և ծնաւդքն աղետորով սրբաբն ալիքին. և աւգնել ոչ կարէին անմեղ զառանցն իւրեանց: Եւս առաւել կըսկիծ տեսաք որ մին տանուէր և Գ (3) աղայ և ընդ կին ի մի տան՝ ի տանէն ելանել ոչ կարացին և անօրէնքն զոռնն վառեալ՝ զնոսա անդ ալիքին որպէս... նահատակ: Եւ զեղբայրն վարդապետին թումայի ալ կրակով (... չորս տող անընթեռնի...): Զոր սուրբ նահատակաց զասակից արասցէ» (Յիշ. Ա.): Թովմա վարդապետ Մեծօփեցիի նահատակեալ եղբայրն է, Արիստակէս, որուն նահատակուած ըլլալուն (կրակով) մասին կը յիշուի: Վենետիկի Միսթարեանց այս

ձեռագրին յիշատակարանին շնորհիւ կը ծանոթանանք որ նահատակութիւնը տեղի ունեցած է 1437ին: Կ'երեւի թէ անհանգարտ պայմաններուն համար՝ Յով. Մանգասարենց ինքն ալ զլիսուն ճարը տեսնելու նպատակով փախստական եղած է: Նոյն յիշատակարանին մէջ կը գրէ. «Յայսմ չար ժամանակի սկսաք զգիրքս ի քաղաքս Արծկէ. ընդ հովանեաւ ամենամաքուր Աստուածածնիս՝ և պատերազմի սուրբ Նշանիս»:

1441ին դարձեալ Արճէշ էր «ընդ հովանեաւ սուրբ և հրաշալի Կաթողիկէ եկեղեցեաց», ուր կը գրէր երկու գրչագիր, որոնցմէ մին «ընդ հովանեաւ կըմբէթայարկ և խորանաձեւ սուրբ եկեղեցոյս որ յանուն սուրբ Գէորգայ զաւրափարին կա-

1. Շահեկան է վկայութիւնը որ կու տայ Յով. Մանգասարենց իր այս յիշատակարանին մէջ: Սքանդար իր Ջահանշահ եղբայրը Վանայ տէր կը նշանակէ, մինչ թովմա Մեծօփեցիի համաձայն՝ Սքանդարի որդի Արալին է յիշուած տէր Վանայ: Կ'երեւի թէ Արալի Շամախի փախուստէն վերջ՝ Ջահանշահ տէր նշանակուեցաւ Վանայ: Երբ Շահառու այս կողմերը արշաւեց, Ջահանշահ անոր միացաւ, և զարձեալ Վանայ տէր մնաց: Մանգասարենցի 1437ի յիշատակարանին գրութենէն քիչ վերջ, նոյն տարին, Սքանդար յարձակեցաւ Ջահանշահի վրայ, սակայն պարտուեցաւ, և Սքանդար սպաննուեցաւ իր մօր և Շահառուի որդւոյն կողմէ, որոնք զլիսը Ջահանշահ տարին: Սքանդարի մահուամբ՝ երկիրը պահ մը խաղաղեցաւ:

ուղեակ կայ» (Յիշ. Բ. և Գ.): Ասոնցմէ տառջինը, որ Վարդան զրախալի համար գրուած՝ Վենետիկի Միսթարեանց Յիսուս Որդին է, անծանօթ պատճառով մը, յիշատակարանը «յետ Ժ (10) տարեց գրեցի» կ'ըսէ: Իսկ երկրորդ գրչագիրը Ճաշոցը, գրուած է «Մկրտիչ քահանայի, ըստացողի և նկարողի» համար: Դժբախտաբար ստացողն ու ձեռագիրը կը վտանգւէին: Ստացողն է որ կը պատմէ. «... Արդ ևս Մկրտիչ քահանայս ուխտ եղեալ էի զնալ յերուսաղէմ, և ի գրադմանէս և ի ծուլութենէս ոչ չտապեցայ, և յազգմանէ չարին եկաւ Նուրաւանդն ի վերայ Արծիշոյ և թալանեց զամենեսեանս, և մեր չհանգիւղեալ ուխտին՝ առաք զգիրքս և բերաք ի Տիւրիկիս և տուաք ի Ղազար երէցն. և նա մեղ ետ Ծ (50) Փլօրի, և մեք տարաք յերուսաղէմ» (Յիշ. Գ.): Նուրաւանդի այս արշաւանքին ինչ եղաւ Յով. Մանգասարենց, զժրախտաբար չէ յիշատակագրուած: Իր բուն մայրը Փաշամելէք արդէն մեռած էր 1437ի իր յիշատակարանին համաձայն, և հայրը՝ Մանգասար վերստին ամուսնացած էր, թէեւ իր երկրորդ կնոջ անունը անյայտ կը մնայ: Յով. Մանգասարենց կը բաւականանայ միայն «և միւս մաւրս իմոյ» յիշատակութեամբ» (Յիշ. Ա.):

1445ին, Աւետարանի գրչութեան ատեն Յով. Մանգասարենց արդէն սկսած է տառապիլ իր աչքերուն ցաւէն ու տկարութենէն. «զտկարութիւն աչացս մոռացայ, և զգիրքս գրեցի»: Աւետարանին գրչութիւնը կը կատարէ «ի պաւոս Գալթերունեաց, ի յաստուածապահ քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյս, և ծաղկեցաւ ի Սուրբ ուխտս Մեծօփայ» (Մինասի ձեռքով): Յով. Մանգասարենցի այս գրչագիրը Աւետարանին մեկենասը եղած է թովմա Մեծօփեցիի եղբոր Գորգի Մէլիքին որդին՝ Յոհաննէս կրօնաւոր (Յիշ. Դ.):

1450ին, միշտ «յԱրճէշ քաղաքի, ընդ հովանեաւ և ի զուռն սուրբ տաճարիս Գէորգեայ զաւրափարին» կը գրէ Աւետարան մը (Յիշ. Ե.): Մեռած են իր ծր-

նողքները, որոնց մասին հոս կը յիշէ, և կ'աւելցնէ. «Բայց խոշորութեան գրիս անմեղադիր լինել աղաչեմ, զի կար մեր այս է: Եւ զի սիրտս խոցեալ է ի սատանայէ: Եւ զի կենդանոյն մեռեալ եմ: Եւ աչքս ի բազում արտասուաց կուրացեալ է. զի իմ սիրական որդիքն Սահակն ու Մեսրոպն զիս սեւեցին»: Վկայութիւնը շատ որոշ չէ, թէ իր Սահակ ու Մեսրոպ որդիքը մեռել են այդ տարի, թէ գերութեան տարուեր: Եւ քանի որ յաջորդ յիշատակարաններուն մէջ անոնց մասին այլեւս չի յիշեր, ստիպուած ենք խորհելու, որ մեռած են, հաւանաբար յաճախ պատահող փոխանցիկ մահացու հիւանդութեամբ մը: 1470ին պիտի տեսնենք որ իր մնացեալ երեք զաւակներն ալ նոյն տարւոյն մէջ կը մեռնին, մահաւորածամի մը պատճառով:

1454ին, Վարդան կրօնաւորի համար կը գրէ Աւետարան մը, մանրանկարեալ, դարձեալ Մինասէ: Յով. Մանգասարենց գրչութիւնը կը կատարէ «ի զանութեան արեւարբու բոնաւորին Ջահանշայի, որ զնաց բոնութեամբ և էառ զԾիրաղ և զԻսպահան»: Եւ մինչ ան այս արշաւանքներով գրադած էր, իր անտէր երկիրը կ'ապստամբէր ուրիշ: Յովհաննէս կը գրէ. «Բայց մեք կամք ի յահ և ի փախ, զի զաւրքն Ուղուն-Հասանի հանապաղ կու գերեն զմեզ և թալանեն: Ի յայսմ տառապանս կալով գրեցի զսուրբ Աւետարանս ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ և ի կղզիս, որ կոչի Լիմն»: Եւ գրչագրին մէջ այլուր կ'աւելցնէ. «Աւա՛ղ զառնութեան աւուրցս և վա՛յ կենաց մերոց, որ յամէն օր Ժ (10) անգամ կու մեռնիմ յահ սպանման և զողայով կու գրեմ» (Յիշ. Զ.): Պարզապէս անգերազանցելի հերոսական արարք մըն է այս, հայ մշակոյթի վաստակաւորին բոլորանուէր ծառայութիւն՝ մեր գրին ու գիրքին: Երեւակայել որ փախստական, հոգին ձեռք առած, մաղապուրծ, Ուղուն-Հասանի արիւնախանձ ջոկերներէն միշտ վտանգուած, մէկ նուիրում և միակ հոգ մը ունի, շարունակել և աւարտել իր գրչութիւնը:

1455ին, դարձեալ զինքը կը տեսնենք «ի յերկիր Քաջբերունի, ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ, ի դուռն Սուրբ տաճարին Գէորգեայ» Աւետարանի մը զբնութեամբ ըզբազանցած: Հաւանաբար հոն էր դեռ, երբ կը գրէր 1456ին Աւետարանը, Վարդան հայրապետին համար: Կ'երեւի թէ զիրքը կազմուած էր՝ երբ համարաբար զբնէ հարկ կ'ըլլայ, էջերուն ստորին լուսանցքներուն վրայ: Յով. Մանգասարենց այդչափ զգուշացնելու դրժը կատարած ատեն՝ կը գրէր ստացողին համար. «Տէր Վարդան սուրբ հայր, անհնար է ի կապած զիրք համարաբար զբնէ, բայց սէր սրբութեան քո ետ զբնէ զայս, զի իմ մահու աւուրն կանգնիս» (Յիշ. Ը.), այսինքն, քեզ սիրելուս համար է որ կը գրեմ, որուն համար իմ մահուան օրս՝ բարի վրկայ կ'ըլլաւ ինծի: 1456ին գրած է մասամբ իմ Մաշտոցս՝ Տէր Ազարիային:

1457ին կը գրէ ձառնոց մը, Մխիթար կրօնաւորի համար, որուն ուսուցիչ կը լիչէ «զվարպետ Վարդանն» որ անտարակոյս գրական է: Ուրեմն, Մխիթար կազմող մըն էր, որուն մասին առ այժմ աւելի բան մը չեմ գիտեր: Գրչութիւնը կը կատարէ «յերկիրս Քաջբերունի, ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ, ի դուռն սուրբ տաճարին Գէորգեայ զաւարակարիս» (Յիշ. Թ.): Նոյն ատեն մասամբ գրած կ'երեւի Յայսմաւուրք մըն ալ:

1461ին, կը լիչուի ձառնոց մը, որ Ուրմիոյ Չարպազ զիւղը կը գտնուէր: «Ստացող՝ աթոռակալ սուրբ Բարդուղիմէոսի Հայրապետ եպիսկոպոս, որդի Ստեփանոս քահանայի ու Չուլալ-Խաթունի, զրիչ՝ Յովհաննէս քահանայ, գրակազմ՝ Վարդան, յերկիր Քաջբերունի, ի յԱրճէշ քաղաքի, ընդ հովանեաւ սուրբ տաճարին Գէորգեայ զօրավարին, ի հայրապետութեան Չաքարիայի, ի փաթշահութեան Ջհանշահի»²: Դժբախտաբար յիշատակաւորանը չի տրուիր, սակայն պէտք է Յովհաննէս Մանգասարենցի գրչութիւնը նկատել հաւանաբար:

1462ին, կը գրէ Աւետարան մը՝ Խօջայ Խաչատուրի եւ անոր կնոջ Սօլթան Խա-

թունի համար միշտ «յերկիրս Քաջբերունի, ի քաղաքիս՝ Արճէշ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ տաճարին Գէորգեայ զաւարակարիս» (Յիշ. ԺԲ.): Չարմանալի է, սակայն, որ Յով. Մանգասարենց ցարդ բոլոր յիշատակարաններուն մէջ լսկ կը լիչէ «յաշխարհակալութեան մեծ զանին՝ Ջհանշահ փաթշահին, որ մեծաւ քաջութեամբ տիրեաց աշխարհին Իրադա»: Արդեօք իր իշխանութեան տարածմամբ եւ զօրացմամբ աւելի տանելի՞ եղաւ: Ամէն պարագայի տակ, այս երկար յիշատակարանին մէջ, Յով. Մանգասարենց չի գտնուարդ աւեր-աւարութեանց մասին:

1463ին, դարձեալ ան կը գրէ ուրիշ Աւետարան մը, ուր դարձեալ Ջհանշահ անոնց զէշ անուանումներու կը յիշուի իրր «փաթշահ»: Կ'աւելցնէ «եւ է իշխան երկրիս՝ նորին որդին Հասան Ալին» (Յիշ. ԺԳ.):

1465ին կը գրէ Աւետարան մը եւս, միշտ անդ, Խալիմ խաթուն տիկնոջ համար, որուն ամուսնոյն ու տղոց պատահածները, մի առ մի յիշուած յիշատակարանին մէջ (Յիշ. ԺԴ.), կրնան ողբերգութեան մը նիւթ կազմել: Այս 1465ին, Յով. Մանգասարենցի կինը կը մեռնի, որուն մասին ան կը յիշատակագրէ. «կենակցին իմոյ Շուքրանին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս»:

1468ին, կը գրէ Աւետարան մը եւս, անդ, ամիր Սարգիսի եւ կնոջ Հայխաթունի համար: Այդ ատենները երկրին տէրութիւնը կը փոխուի եւ Ուղուն-Հասան կը տիրակալէ: Ան ինքզինքը Թադաւոր Հայոց կը կոչէր (Շահր Արման):

Յաջորդ 1469 տարին կը գրէր Շարակնոց մը, անդ, Չաքէոս կրօնաւորի համար (Յիշ. ԺԵ.):

Դարձեալ անդ, 1470ին, Շարական մը, բարունի Մկրտիչ Արդելանցիի համար: Յով. Մանգասարենց կը գրէ «եւ պակասութեան գրիս անմեղադիր լերուք, զի

2. Լ. Ս. Խաչիկեանի Յիշատակարաններու շարք (1451-1480) թիւ 200, կամ էջ 160: Արտատրուած է. Ալիշանի «Հայկաբան»էն:

կար իմ այս է: Եւ հողովս հիւանդ եմ ի խոցմանէ սատանայի, եւ մարմնովս տըկար եմ ի խոցմանէ հրեղէն սրոյն Աստուծոյ, որ մահտարածամ է անմեղ տղայոցս. աչքս կուրացել է ի բազում լաւոյս, մէջքս կոտորել է, ձեռքս թուլացել է, զի իմ մէկ որդին Մխիթար զօրոյմէն հայրս սեւեց յայս աւուրքս, եւ ես մնացի անյիշատակ» (Յիշ. ԺԶ.):

1471ին, Արճէշ, կը գրէ Աւետարան մը եւս՝ Ծերունի եւ անոր կնոջ Ուսուլ-Մեւիքի համար, որոնք Աւետարանը կը նըւիրեն Խժիշկ զիւղի Սր. Ստեփանոս Նախավայի եկեղեցւոյն (Յիշ. ԺԷ.):

1472ին կը գրէ Մաշտոց մը Գանձարան Տէր Գրիգոր քահանայի համար, միշտ Արճէշ (Յիշ. ԺԸ.):

Իսկ 1474ին, Աւետարան մը, դարձեալ անդ, նորընծայ Տէր Կարապետ Եպիսկոպոսին համար (Յիշ. Ի.):

1476ին Վան գրուած Ճառնախօսի մը մէջ (Նոր Զուգայ, թիւ 544) Ազարիայ գրծող կը լիչէ «... միւս վարպետին իմոյ տէր Յովանիսին Արճէշեցոյն, որ Մանգասարենց կոչի...»:

1479ին, Աւետարան մը եւս, նոյնպէս անդ, որուն գրչութեան ատեն կ'երեւի թէ նոր մահտարածամ մը մանուկներուն մէջ նախճիր կը սփռէր: Կ'աւարտէ գրչութիւնը «ի գառն եւ ի սարսափելի աւուրքս, որ կայ ի միջի մերում սուրն աստուածային եւ խոցող զանմեղ տղայքս. խոցեալքն մեռանին եւ այլքն ահարեկ լինին, լան եւ տրտմին, ոչ հաց ուտեն եւ ոչ ջուր ըմպեն: Եւ խոցեալքն գան լալով եւ կաղալով առ մայրն եւ անկանի ի զերկս մօրն եւ ասէ. Ո՛ր քաղցրիկ ծնող, մեռանելոյ ի խոցեցայ, թէ ճար գիտես՝ արա, միթէ ոչ բաժանիմ ի ձեզանէ: Եւ ողորմելի ծնողն բաժանիմ ի ձեզանէ, եւ ճար չգիտէր: Եւ սպա տղայն թաւալէր եւ հողեվարէր, եւ կոռելով եւ կանչելով զհողին հանէր, եւ լալի եւ ողորմելի ծնողքն զոչէին, գոռալին եւ հառաչէին, Վա՛յ որդի, կանչէին եւ ուշաթափեալ կենդանոյն մեռանէին: Եւ ո՞ր լեզու կարէ պատմել զեղծ մեռանել տղայոցն եւ զայրել եւ զխորովել ծը-

նողացն»: «Յայն սարսափելի աւուրքս լալոտ աչօք զրեցի սուրբ Աւետարանս» (Յիշ. ԻԱ.):

Յովհաննէս Մանգասարենց այսպէս սրտաշարժ եւ աղեխարշ տողերով կը գրէ, կը նկարագրէ, մանուկներու մէջ ինկած այս խոցմանը, որուն անտարակոյս զոհ կ'ան հառ իր որդիները, քանի մը տարի առաջ: Սրտածմլիկ պալմաններու տակ՝ այս մահտարածամը, կ'երեւի թէ մեծ աւերներ գործած է տեղւոյն բնակչութեան մէջ:

1479էն մինչեւ 1485, իրմէ գրչագիր ծանօթ չէ մեզի. սակայն, անտարակոյս, ան բազմաթիւ գրչութիւններ կատարած է:

1485ին, Մաշտոց-Գանձարան մը եւս կը գրէ, անդ, Տէր Ալեքսանոս քահանային համար, որ Վրաստանէն (վրացთაგან) էր: Եւ կ'աւելցնէ. «Եւ խոչորութեան անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր: Եւ զի Հ (70) տարոյ եմ» (Յիշ. ԻԲ.):

* * *

Յովհաննէս Մանգասարենց ունեցած է աշակերտներ, որոնցմէ կը յիշուին, 1467ին, «մեղաւոր եւ անարժան Կիրակոս երէցն՝ որ մականունն Զողջկանց ասի»: Ան Բաղէշի Հինգ Խորանայ եկեղեցւոյն հովանիին տակ կը սկսի, եւ Աղթամարի Ս. Խաչին մէջ կ'աւարտէ թիւ 273 ճառընտիրը, Նոտարք Հայոց յիշատակարաններուն: Կիրակոս երէց կը խնդրէ յիշել «եւ զուսուցիչն իմ զՅովհաննէս քահանայն զՄանգասարենց»:

Երկրորդ աշակերտ մը, Յովհաննէս քահանայ, որ 1486ին կը գրէ Մաշտոց մը (էջմիածնի նոր հաւաքման թիւ 104), եւ 1489ին կը գրէ Աւետարան մը, «ի Քաջբերունի յԱրճէշ, ի Սոսկոն գիւղ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի», եւ կը խընդրէ յիշել «զուսուցիչն զրիւս՝ տէր Յովհաննէս Մանգասարենց» (Թորոս Աղբար, Բ. մաս, էջ 437):

Իսկ հոս գործածուած Յիշատակարաններուն թիւ Ա.ին մէջ տեսանք՝ որ իր Չա-

քարա որդին, իր վարպետին մահէն ետք՝ կ'ամբողջացնէ անոր սկսած Աւետարանը, 1505ին, ի վան:

Ան ունեցած ըլլալու է տակաւին մեղի անծանօթ բազմաթիւ աշակերտներ, որոնք անշուշտ հետզհետէ պիտի յայտնուէին:

* * *


Իբր ծանօթութիւն՝ աւելցնեմ, որ Մանկասարենց Թումա մըն ալ կը յիշուի, 1415ին, Ծերուն (որ «ի նարեան ժամա-

նակիս Հէրպէտ կոչիմ») զրէն, իր Աւետարանին յիշատակարանին մէջ, կարդալ տանուէրերու շարքին: Աւետարանը զրուած է Ռչտունեաց Ապաւանքի Սր. Վարդան մենաստանը (Նոտարք Հայոց, էջ 46):

1415ին, Յով. Մանկասարենց նոր ծընած էր: Եղբայրներ և քոյրեր ունենալուն մասին՝ ոչինչ ծանօթ է:

(Շար. 2)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ



ԷՋԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՅ

ՉԱՐՄԱՀԱՆ ԳԱՒԱՌԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Իրանի Չարմահալ գաւառի հայաբնակ զիւղերում զեղջուկ ժողովուրդն իր գոյութեան 360 երկար տարիների պատմութեան ընթացքում, ունեցել է իր ինքնատիպ ժողովրդական բժշկութիւնը և զեղերի պատրաստութեան մշակոյթը, որոնք, սակայն, ժամանակի բժշկական գրականութեան մէջ չեն ընդգծուել և մինչև օրս էլ մնացել են անտիպ:

Այդ ժողովրդական բժշկութեան և զեղատոմսերի փաստական աղբիւրները զրաւոր կերպով առաջին անգամ հրատարակում ենք Բազմավէպում, որպէսզի հայ բժշկական գրականութեան սեփականութիւնը դառնան և ընդմիջտ կորստից փրկուեն: Դրանք իրենց հիմնական բովանդակութեամբ ընդգրկում են երկու տարբեր աշխարհամասեր — հայաստանեան և իրանական:

Հայ զեղջուկներն իրենց պապերից ժառանգաբար աւանդ ստացած բժշկական հմտութիւնը, 1605 թուին, Շահ-Աբբաս

Մեծի բռնի զաղթի շրջանում Հայաստանից իրենց հետ բերում են Չարմահալ և նոր միջավայրում նրանք իրենց բժշկական արուեստը նորանոր գիտելիքներով աւելի ճոխացնում են: Դրանք իրենց ամբողջութեամբ սերնդից սերունդ աւանդում բժշկական մշակոյթի յուշարձաններ են, որոնց հետազոտութիւնը և ուսումնասիրութիւնը նշանակալից են այն տեսակէտից, որ հարստացնում են հայ բժշկական գրականութեան գանձարանը:

Սակայն, ընդգծենք մի կարեւոր հանգամանք: Չարմահալի հայ զիւղացիների առողջապահութեան և բժշկական օգնութեան գործը, մինչև ԺԹ. դարի վերջին շրջանը, շատ անմխիթար պատկեր է ներկայացնում: Միայն Ի. դարի ըսկըրները, Նոր-Ձուղայի «Յովսէփ Պօղոսեան» հիւանդանոցի Յանձնախմբի կարգադրութեամբ, երբեմն շրջուն բժիշկներ՝ տարափոխիկ հիւանդութիւններ ի դէմ պայքարելու համար՝ զնայել են

Չարմահալ և զիւղացիներին բժշկական օգնութիւն են ցոյց տուել: Փաստ է և այն, որ մինչև «Չարմահալ գաւառի հայ բժշկական Միութեան»* 1941 թուին, Մամուռան զիւղում Բուժարանի բացումը՝ ամբողջ գաւառը չի ունեցել ո՛չ իր բժշկատունը, ո՛չ իր հիւանդանոցը և ո՛չ էլ իր յատուկ այցելու բժիշկը: Այդ տրտուր երեւոյթով պիտի բացատրել, որ Չարմահալում զիւղացիների ամենամեծ և ամէնէն ոխերիմ թշնամիները հանդիսացող տարափոխիկ հիւանդութիւններն ու համաճարակները բազմաթիւ անմեղ ու պայծառ կեանքների մահուան պատճառ են դարձել:

Հայ ծերունի զիւղացիների վկայութեամբ՝ Չարմահալում ամէնից շատ տարածուած և ամենավտանգաւոր հիւանդութիւններից, որոնց զեղջուկներն երկար տարիներ շարունակ ենթակայ են եղել, կեղբոնական տեղ են զրաւել զողջոցը, ջերմը, մալարիան, աչքացաւը, քուքը, ոսկրացաւը, դիզենտերիան, որոնք դժբախտացրել են զիւղացիների ընտանեկան խաղաղ ու երջանիկ կեանքը. իսկ ծաղիկ ու կարմրուկ հիւանդութիւնները խամբել են բազմաթիւ անմեղ ու պայծառ մանուկների արեւաշող կեանքը: Դեռ 1895 և 1917 թուականների վիճակագրական տեղեկութիւնները վկայում են, որ ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւններից Չարմահալի տարբեր զիւղերում վախճանուել են մօտ 50 անմեղ երեխաներ, որոնք իրենց ծնողների սրտերը համակել են անսահման տխրութեամբ ու խորունկ վշտով:

Չարմահալում վարակիչ հիւանդութիւններից նոյնքան բացասական ու քայքայիչ դեր են կատարել վիճակաւոր ախտերը, որոնք խորապէս յուզել են զիւղացիների հոգեկան աշխարհը:

Ընդգծուած ծանր և վտանգաւոր հիւանդութիւններից ազատուելու համար՝ երկիւղած ու պարզասիրտ զիւղացիներից ոմանք, հնազոյն շրջանում, դիմել են որբերի օգնութեանը, ուխտ են կատարել, մատաղ են արել, խունկ ծխել, մոմեր վա-

ռել. իսկ չար ոգիներից և չար աչքերից փրկուելու համար դիմել են զիւղական դուշակներին, «Փալչի»ներին կամ զիւղի քահանային, որ հիւանդների զլխին կարդացել է անմահ քնարերգակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Նարեկ»ը և այլ աղօթքներ է մրմնջացել:

Սակայն, Չարմահալի շատ զիւղերում հայ զիւղացիները բժշկական օգնութիւնից միանգամայն դուրկ լինելով՝ դիմել են զիւղական բժիշկներին, «Ջառուհներին» (վիրահատներին), որոնք իրենց բժշկական «հմտութիւնը» հաղորդել են ժառանգաբար: Կան նա և «չքեասթ բանդ»ներ, որոնք իրարից են սովորել: Նրանք հիւանդի վնասուած ոսկորները կապել են, կամ դուրս ընկածը տեղը դրել, իսկ տեղական բոյսերից ու արմատներից պատրաստել են մի քանի տեսակ զեղեր:

Արձանագրենք և այն, որ Չարմահալում ամէն մի գերդաստանում դեր են կատարել պառաւներն ու ծերունիները, որոնք ծանօթ լինելով սովորական հիւանդութիւնների բժշկութեանը, իրենք են բժշկել. և երբ նկատուել են, որ իրենց զեղերը չեն օգնել, դիմել են զիւղական բժիշկ-կանանց: Դրանք զլխաւորապէս տատմէրներն են, որոնք սովորաբար սերնդից սերունդ աւանդել են իրենց բժշկական գիտութիւնը և անձնական փորձառութեամբ ձեռք բերած «արուեստը»: Ընդհանրապէս Չարմահալի հայաբնակ որոշ զիւղերն ունեցել են իրենց տեղական բժիշկները, որոնք չորս-հինգ սերունդ յաջորդաբար զրաղուել են հիւանդութիւնների բժշկութեամբ. նրանք բժշկական գիտելիքները սովորել են իրենց պապերից:

*) «Չարմահալ գաւառի հայ բժշկական Միութեան» հիմնուել է 1941 թուի սկզբին Նոր-Ձուղայում, որի հիմնադիր անդամների շարքում պատուաւոր տեղ են գրաւում՝ Տ. Կարապետ քհն. Մանուկեան, Յարութիւն Աւանեան, Յովհաննէս Օհանեան, Բարդուղ Բարդուղեան, Մալուս Սուքիասեան, Անդրանիկ Ղարախանեան, Գալստաս Մելքոնեան, Յովհաննէս Կարապետեան և այլ չարմահալի զիւղացիք ու աղիւ մտաւորականներ: